

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4925

# ԲՐԱԿՆ ՍԻՐՏԸ



24  
15-35

0.08018e-09 8.0E-1

1, 2, 3

ԱՅՍՎԵՐԻ ԲՈՅ

**ՏԱՐՅԱԿԱՆ ՊՐԵՄԻՈՆ**

1931

24  
Մ-35

EPoS NUL 2-S  
31 OCT 2009

# ՄԱՐԴՈՒՆ ՍԻՐՏԸ

ԱՍՏՈՒՅՑ ՏՈՒՆ

ԿԱՄ

ԱԱՏԱՆԱՑԻ ԲՈՅՑ

ՏԱ.ԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՊՈՐՉՈՒՈՇ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Գ. ՊՈԼԻՍ

1930

25 JUN 2013

4925

ՏՄԱՐԱՆ ՍԵԼԱՄՔ  
ԴԱՆԻԷԼ ՕԶԱԽՆԻԵԱՆ



63/97-67

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ ՄԷԿ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Այս գիրքը նախ Ֆրանսերէն գրուեցաւ։ Յետոյ 1734է սկսեալ Գերմանիերէնի և ուրիշ լեզուներու թարգմանուելով Քրիստոնեայ աշխարհի մէջ շատ տարածուեցաւ։

Այս գիրքը տասը պատկերով կը ներկայացնէ մարդուն ներքին վիճակը, կամ Քրիստոնէական կրօնքի հետեւողին սրտին մէջ Աւետարանի տեսակէտով տեղի ունեցող բարոյական փոփոխութիւններն ու զարգացումները։

Գիրքին բուն անունն է «Մարդուն Սիրտը»։ Սակայն թարգմանիչներն առ հասարակ ընտրեցին կոչել պայն «Հոգիի Հայելի», «Ներքին Հայելի», և «Ներքին Վիճակի պատկեր»։

Իսկ մենք կը պահենք գիրքին նախնական անունը, «Մարդուն սիրտը»։

Յիսուս Քրիստոս և անոր աշակերտները քարոզեցին թէ Աստուած իր թագաւորութիւնը հաւատացեալներու և բարեպաշտներու մէջ կը հաստատէ և անոնց մէջ կը բնակի իր իր տան մէջ։ Այսինքն Աստուած իր Սուրբ Հոգիով կը կենդանացնէ ու կը սրբէ հաւատացեալները և անոնց մէջ բնակելով կը լեցնէ զանոնք Աստուածացին գօրութեամբ, երկնային խաղաղութեամբ ու յաւիտենական կեանքով։

• ջ ւ ն ը

Սատանայ ալ չարերու և անհաւատներու մէջ հաստատուելով չարութիւն կը գործէ և զանոնք թշուառու յաւիտենապէս դժբախտ կ'ընէ: Ինչպէս Յովհան Հովուն մէջ գրուած է, «Եթէ Սատուած ձեր Հայրը ըլլար, պիտի սիրէիք զիս. Վասն զի ես Սատուծմէ ելայ ու եկայ. և ոչ թէ ես ինքիրմէն եկայ, հապա ան զիս զրկեց: Ինչո՞ւ գուշ իմ խօսքերս չէք հասկնար. անոր համար որ չէք կրնար իմ խօսքս մտիկ ընել: Դուք ձեր հօրմէն Սատանայէ էք. ու ձեր հօրը բաղանքը կ'ուղէք ընել, ան սկիզբէն հետէ մարդասպան էր, և ճշշմարտութեան մէջ չկեցաւ, վասն զի անոր ներսիդին ճշմարտութիւն չկայ, երբ ան ստութիւն խօսի բուն իրեններէն կը խօսի, քանզի ինք ստախօս է և անոր հայրը: Բայց որովհետեւ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինծի չէք հաւատար: Զեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի համար. խակ եթէ ես ճշմարտութիւն կը խօսիմ. ինչո՞ւ ինծի չէք հաւատար: Ան որ Սատուծմէ է, Սատուծոյ խօսքերը մտիկ կ'ընէ. գուշ անոր համար մտիկ չէք ըներ, որ Սատուծմէ չէք:»

Յովհաննէս առաքեալ իր առաջին թուղթին Գ. գըլիսուն մէջ կ'ըսէ, «Ան որ մեղք կը գործէ, Սատանայէ է, վասն զի Սատանայ սկիզբէն ի վեր կը մեղանչէ, ատոր համար Սատուծոյ Որդին յայտնուեցաւ, որ Սատանայի գործերը քակէ:»

Գալով պատկերներուն մեկնութեան, գիրքին մէջ գտնուող տասը պատկերներուն մէջ սիրտ մը և դէմք մը մարդուս ներքին վիճակը կը յայտնեն: Արտին, որ բարիին բնակարանը և կամ չարին բոյնն է, վիճակը ցուցնելու համար սիրտ մը և դէմք մը նկարուած է: Դէմքը ներքին վիճակը յայտնող հայելի մ'է: Մարդու

մը դէմքին նայելով՝ չափով մը կը հասկնանք թէ ի՞նչ տեսակ հոգի կը կրէ:


Ուստի, սիրելի ընթերցող, այն պատկերներուն նայելու պահուն, քու սրտիդ ալ նայէ և հոգեւոր վիճակդ ուշադրութեամբ դիտէ, որպէս զի հասկնաս թէ ի՞նչ է վիճակդ, Յիսո՞ւս թէ Սատանայ կը տիրէ քու մէջդ, Սատանայի գերի ես թէ Սատուծոյ աղատ Որդիի: Լրջօրէն խորհէ և անկերծօրէն խոստովանէ թէ ի՞նչ գիրքի մէջ ես Սատուծոյ առջեւ: Դուն սիրտերը և երիկամունքները քննող, ամէն բան տեսնող ու զիտցող Սատուծոյ առջեւ կեցած ես, որմէ ոչ մէկ բան ծածուկ կը մնայ: Եթէ չար բան մը կայ քու մէջդ, զղջա, բայց մի վհատիր, լիովին խոստովանէ և Յիսուսի դարձիր: Ան քու ալ Փրկիչդ է, և քեզի համար աշխարհ եկաւ: Ան պատրաստ է քեզի համար ալ Սատանայի գործերը քանդել, քեզ անոր տիրապետութենէն աղատել և իր յաւիտենական թագաւորութիւնը տանիլ: Ան կարող է քեզի զօրութիւն տալ որ այլեւս Սատանայի չպատակիս և մեղքի չծառայես, այլ ճշմարտապէս աղատ ըլլաս:

## ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏԿԵՐ Ա.

Այսպէս է սիրտը աշխարհային մարդուն, որ այս աշխարհի, այսինքն ապստամբօրէն գործող ցանկութիւններու իշխաննին, ոգիով կ'ապրի ու մեղքի անձնատուր կ'ըլլայ (Եփես. Բ-2): Անոր դէմքին վրայ ծաղրի արտայայտութիւն մը կայ: Բանի տեղ չդներ մեղքը, և բա՛ն մեղք չնամարիր: Չար սրտի մը փափաքները կատարելու համար ամէն բան ընել յարմար կը համարի: Աստուծոյ, յաւիտենականութեան և դատապարտութեան վրայ բնաւ չխորհիր:

Սրտին մէջ Սատանայ կայ և եօթը մահացու մեղք, որ կը պատկերացուին անոր իշխանութեան տակ գըտնուող եօթը անասունի ձեւով: Սիրամարդը, իր տարածուն թեւերով միւս կենդանիներուն առջև պարձելուն ու մեծութիւն ծախելուն համար հպարտութեան նշան է: Շատեր անոր պէս, իրենց ձիրքով, խելքով, հարստութեամբ և կամ գեղեցկութեամբ որով անարժանաբար օժտուած են Աստուծմէ, ուրիշները գերազանցելով կ'արհամարհեն զանոնք: Էշը հետասէր կենդանի է և կը ցուցնէ պղծութիւն ու անպատճութիւն, խոզն ալ՝ անժուժկալութիւն, շոայլութիւն, որկրամոլութիւն, արբեցութիւն և նման պղծութիւններ: Մուկը, որ կիրքով ու ագահութեամբ միշտ ճամբայ կը փորէ գետնին տակ, ագահութեան օրինակ է: Աշխարհի սոտցուածներով չգոհանար, և կիրք ու անկէ յառաջ եկող մասներ կը ներկայացնէ: Գայլը վայրենի, յօշոտիչ կենդանի է և մարդկային բարկու-



Ներին վիճակն անոր, որ մեղի կը ծառայէ եւ բոյլ կու սայ որ իր մէջ Սատանայ իշխէ:

թեան, ատելութեան ու թշնամութեան նշան է վասն-զի բարկութեամբ վրէծ առնել ուղղողներու ընթացքը այս յօշոտիչ կենդանիին ընթացքէն տարբերութիւն չունի: Օձը Աղամի և Եւայի երջանկութեան նախանձելով խաբեց զանոնք ու պատճառ եղաւ որ գրախտէն վոնտուին: Ուստի նախանձի և ուրիշներու կործանման համար աշխատողի ճշմարիտ օրինակ է: Կրիան կամաց շարժելուն համար ծուլութեան և բարի գործերու մէջ ծանրաշարժ ըլլալու նշան է:

Սրտին գրսի կողմը գտնուող Սր. Հոգին աղաւնիի կերպարանքով կը ցուցուի: Ի՞նք թէև սրտին մէջ մտնելու ճամբայ չգտներ, չթողուր սիրտը, այլ իր ողորմութեան ու յայտնութեան շողերով կը շրջապատէ զայն: Սրտին մէջ այս կենդանիներուն ներկայութեան կը հասկցուի որ ամբողջովին Սատանայի իշխանութեան տակ ու մեղքի խաւարին մէջ է, և Սր. Հոգին չկրնար անոր մէջ մտնել: Հրեշտակը կամ Յիսուսի ողորմութիւնը կը ջանայ Սատուծոյ խօսքով համոզել և կամ երկնային ուրիշ միջոցներով արթնցնել մեղաւորը: Սակայն չուղեր ան մտիկ ընել և չհամոզուիր, ինչու որ ամբողջովին անզգայ եղած և մեղքի հաճոյքներով գինովցած է: Ահա այս է իր ցանկութիւններով ապրող մեղաւորին թշուառ ու սարսափեալ վիճակը:

Որքան մարդիկ կան որ այսպէս անհոգ են ու բնաւ չեն խորհիր թէ վտանգ կայ: Անունով հաւատացեալ են և Քրիստոնեայ կը կոչուին: Բայց իսկապէս մեղքի ծառայ են և Սատանայի գերի: Անունով ողջ են, բայց իրապէս մեռած:

### Ա.Դ.ՕԹ.Ք

Ով ողորմած Աստուած ու Փրկիչ, դուն իմ թըշտւառ ու մեղաւոր սրտիս նայէ քու անսահման գութովդ: Հոգիիս աչքերը լուսաւորէ երկնային լոյսիդ ճառագայթներով: Խաւար սրտիս մէջ լոյս մը վառէ, որպէս զի տեսնեմ և գիտնամ ներքին վիճակս: Ազատէ զիս այս ցաւալի վիճակին բերող ամէն բաներէ: Ով ամենակարող Փրկիչ, զիս պահէ, պահպանէ, որպէս զի այլեւու կամաւ չմեղանչեմ ու սիրտս այս անիծեալ թշնամիին բոյն չդարձնեմ: Վախցուր զիս սախոսքերովդ: «Ան որ մեղք կը գործէ՝ մեղքի ծառայէ, և Սատանայէ է», և «ի՞նչ չարութիւններ ունենամ, սիրտս ալ այնչափ չար ոգիներով պիտի պըզծուի:»


Ով ամէն բանի արարիչ Աստուած, դուն իմ սիրտը քեզի համար ստեղծեցիր: Ես ի՞նչպէս տամ զայն որ Սատանայի բոյն ըլլայ: Ամենակարող տէր, ազատէ զիս Սատանայի իշխանութիւնէն և մաքրէ մեղքի արատներէն, մեղաւոր սիրտս հանէ ինծմէ, և իմ մէջս քեզի ընկունելի բնակարան ըլլալու ու քու սուրբ անունդ փառաւորելու յարմար նոր ու մաքուր սիրտ մը ստեղծէ:

## ՊԱՏԿԵՐ Բ.

Աստուծոյ և Յիսուսի ողորմութիւնը ներկայացնող հրեշտակը մեղաւորին առջև կը դնէ մեղքին վախճանն ու վարձքը, այսինքն սուտ, դատապարտութիւն ու մահ։ Կը համոզէ զայն Աստուծոյ խօսքով. «Մի խարուիք. ոչ պոռնիկները, ոչ կուպաշտները, ոչ չնացողները, ոչ իգացեալները, ոչ արուագէտները, ոչ գողերը, ոչ ագահները, ոչ գինովները, ոչ նախատողները և ոչ յափշտակողները Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն։» «Բարկութիւն ու սրբամտութիւն պիտի ըլլայ ամէն մարդու վրայ որ չար կը գործէ։»

Մեղաւորը խղճէն խայթուելով կը մտածէ և սրտին նայելով կը տեսնէ թէ մեղքով ու քարշելի բաններով լեցուն է։ Այդ պահուն սրտին վրայ շողացող լուսով մը կը տեսնէ մեղքի գարշութիւնը և զղջալով կ'ատէ զայն, կը զզուի անկէ և կը փափաքի անկէ ազատիլ։ Սակայն անոր զօրութիւնը և իր տկարութիւնն ու մեղանչելու հակամիտութիւնը զգալով սրտին խորէն կ'ալզաղակէ, «Ե՞նչ խղճալի մարդ եմ ես, ո՞վ զիս պիտի ազատէ այս մահացու մարմինէն։» Աստուծոյ ողորմութիւննալ Յիսուս Քրիստոսով կը պատասխանէ անոր, և Հոգին Սուրբ Կոտրած ու ապաշխարող սրտին մօտենալով Աստուածային սիրոյ ճառագայթները կը սփռէ ու լոյս ու զօրութիւն։ Կը պարզեւէ անոր։ Եւ երբ Սր. Հոգիին լոյսը սրտին վրայ կը ծագի ու ողորմութեան ճառագայթները կը սփռուին հոն, Սատանայ իր տգեղ հետեւորդներով փախչիլ կ'սկսի և մեղք ներկայացնող զզուելի այն կենդանիները կ'անհետանան։

Հարկաւ խաւարը կը փախչի այն տեղէն ուր լոյս



Ապաշխարելով մեղքի փախչիլ սկսող մարդուն  
ՄԵՐԻ ՎԻՃԱԿԸ

կը ծագի, ինչպէս գիշերը կը կորսուի երբ ցորեկ կ'ըլ-լայ: Ողորմութիւնը լոյս է, մեղքը՝ խաւար ու գիշեր, երբ մեղաւորը կ'սկսի մեղքը ատել, Սատանայ կը ստիպուի անկէ փախչիլ: Անոր ազդեցութիւնը մեղքի մէջ է միայն, խաւարի մէջ միայն: Մեղքի միջոցով միայն կ'ազդէ մարդոց սիրտերուն: Մեղքի սէրն է որ սրտին բանալին անոր կը յանձնէ: Զարութեան հակումն է որ սրտին դուռը կը բանայ անոր: Խսկ Աստուծոյ և բարութեան սէրն ու մեղքի ատելութիւնը չթողուր որ սրտին մէջ մտնէ Սատանայ և կը հալածէ զայն:

Ով հոգիներ, սիրեցէք լոյսը, ատեցէք չարութիւնը, դէմ դրէք չարին: Հակառակեցէք, և Սատանայ կը փախչի: Գոցեցէք ձեր աչքերը աշխարհի, մեղքի և ամէն չար փախաքներու դէմ: Ձեր սիրտը Սուրբ Հոգիին լոյսին առջեւ բացէք: Թող անոր ճառագայթները լուսաւորեն ձեր սիրտը: Ան կը վանէ ձեր սրտէն մեղքը, խաւարը, Սատանան և դժոխքը: Ուշադրութեամբ քննեցէք ձեր սիրտը, որպէս զի հոն ծածկուած ամէն ստորին մեղք տեսնէք ու զլուիք անկէ: Բացէք ձեր սիրտը Աստուծոյ լոյսին առջեւ, որ շարունակ կը սպասէ ներս մտնելու համար: Բացէք, որպէս զի մտնէ հոն և լուսաւորէ ու կենդանացնէ ձեզ: Սատուածային այն լուսով ամէն չար կենդանի, ամէն արատ ու բիծ և մեղքի ստուերն խսկ պիտի տեսնէք, և տկարներու զօրութիւն տուող Աստուծոյ ողորմութիւնը պիտի աղատէ ձեզ:

### Ա.Դ.ՕԹՎ

Ով Աստուած, որ լոյսի և կեանքի աղբիւրն ես, միայն դուն կրնաս և հոգիիդ լոյսը կրնայ ինծի ցուց-


նել մեղքին ստորնութիւնն ու աղեղութիւնը: Կեանքի լոյսադ չնորհէ իմ խաւար հոգիիս որպէս զի ես տեսնեմ ու ապրիմ: Դուն չես ուզեր որ մեղաւորը կորսուի և չես ուզեր ալ որ ես կորսուիմ: Դուն կենդանի ես և կ'ուզես որ մեղաւորը քեզի դառնայ ու ապրի: Արդ ինծի ցուցուր զիս կուրացնող, բարոյապէտ մեղնող ու Սատանայի գերի դարձնող մեղքը: Տուր ողորմութիւնդ զոր բոլոր մեղաւորներուն խոստացար Յիսուս Քրիստոսով, որպէս զի սրտիս ազդէ ու զայն խոցէ բուժիչ ցաւերով ու զղչումներով, և մեղք, մահ ու Սատանայ ինծմէ փախչին, Սր. Հոգիիդ տեղ բացուի սրտիս մէջ, ու քու սիրոյդ, հրամաններուդ և ամէն բարութեան համար փախաք արթնայ ծոցիս մէջ և այլեւս չթողում որ մեղքը տիրէ անդամներուս մէջ և այլեւս Սատանայ չկուրացնէ և փորձութեան չտանի զիս: Տուր որ պարզ ու յայտնի կերպով զգամթէ մեղքի մէջ փրկութիւն չկայ բնաւ, ընդհակառակն մեղք գործողը մեղքի ծառայ և դժոխքի ու խաւարի զաւաղէ: Շնորհէ որ յաւիտեան չմոռնամ սա քու խօսքդ թէ չարը երբեք չկրնար քու առջեւդ կայնիլ, ամբարիշտը չկրնար քու թագաւորութիւնդ մտնել: Թերեւս յաւիտեանական մահ, սոսկալի վճիռ ու յաւիտեանական դատապարտութիւն կ'սպասեն բոլոր չարագործներուն: Շնորհէ որ ամէն մեղքի համար զղամ ու խոստովանիմ կատարեալ անկեղծութեամբ և ամէն մեղքէ ու չարութեան նմանող կամ չարութիւն յիշեցնող ամէն բանէ հրաժարելով քեզի դառնամ բոլոր սրտով, և ամէն չարութեանէ սրբուելով խաւարի իշխանութենէն աղատիմ ու քու գիտոյդ, լոյսիդ և հաղորդութեանդ ու հաճութեանդ արժանանամ: Ամէն:

## ՊԱՏԿԵՐ Գ.

Մեղաւորը զինք այսչափ ժամանակ ապաշխարութեան առաջնորդող Աստուածային ողորմութեան ու շնորհքին չնայելով անզգայ և անտարբեր մնալուն դղօմի արցունքներ կը թափէ կոտրած սրտով, և հոգեւին կ'զգայ դառնապէս թէ միշտ և սոսկալի կերպով արհամարհած ու մերժած է անոր մեծ սէրը և շնորհքը և Սատանայի հպատակած:

Աստուծոյ ողորմութեամբ այս վիճակին հասած մարդու մը համար կը ճշմարտուի Սր. Գրոց սա խօսքը. «Ճէրը մօտ է անոնց՝ որոնց սիրտը կոտրած է, ու հոգիով խոնարհածները կ'ապրեցնէ:» (Սաղ. Լդ. 18): Ուրիշ խօսքով, շնորհքը կու դայ անոր սրտին առջև ու կը ցուցնէ խաչուած Յիսուսը և Սր. Աւետարանը: Կը քարոզուի փրկութեան աւետարանը, թէ Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու և երջանիկ ընելու համար, թէ մեղաւորներու համար մեռաւ ու անոնց մեղաց թողութիւն և յաւիտենական կեանք ապահովեց: Յիսուս Քրիստոսով թողութիւն, փրկութիւն ու կեանք և յաւիտենական երջանկութիւն կը խոստացուի սրտով խոնարհներուն:

Մեղաւորը հաւատքով, խոնարհութեամբ ու անկեղծութեամբ կ'ընդունի այդ խոստումը: Խաչուած Յիսուս անոր կ'զգացնէ իր կեանքը, իր մահը և ծառայութիւնը: Մեղաւորը կենդանի հաւատքով կը հաւատայ թէ խոստումն ամբողջովին կատարուած է իրեն համար, ինք փրկուած է ձրի շնորհքով: Յիսուսի բոլոր հաւատացողներուն նման Հոգին Սուրբ առած է և Հոգին Սուրբ իր հոգիին վկայութիւն կու տայ թէ ներուած են բոլոր իր մեղքերը և ինք Աստուծոյ որ-



Յիսուսի եւ Աւետարանի հաւատայող եւ Սր. Հոգիով լյուսած մեղաւորին ներթին վիճակը:

դի եղած է, ինչու որ Սբ. Հոգին խաղաղութեամբ, ուրախութեամբ ու արդարութեամբ կը լեցնէ իր սիրատը և ինք ձշմարտապէս մտած է Աստուծոյ թագաւորութիւնը: Սակայն արցունք կը թափէ դարձեալ, բայց գոհութեան արցունքներ են: Զինք փրկող ու զինք Հոգիով լեցնող Տէրոջ յանձնուելուն համար ուրախութեան արցունքներ են, ինչու որ մարմինն ու հոգին կենդանի Աստուծմով կ'ուրախանան և սրտին մէջ աստղը կը փայլի, հաւատքը կենդանի հաւատք եղած է և իր փրկութեան թշնամիները — այն ստորին կենդանիները — Սատանայ և իր հետեւորդները, ամէնն ալ սրտէն դուրս հանուած են: Այսպիսիներու համար ըսուած է Ա. Կոր. Զ. 11ի սա խօսքը «Դուք... այսպիսիներ էիք, բայց լուացուեցաք ... սրբուեցաք ... արդարացաք Տէր Յիսուսի անունով ու մեր Աստուծոյն Հոգիով»:

Ո՞րքան փառաւոր, երջանիկ և ուրախարար է այսպիսի շնորհիքի արժանացող մեղաւորի սրտին վիճակը: Այսպիսին կ'ուզէ երգ երգի ետեւէ երգել: Իր Փրկչին ու անոր շնորհիքին համար աննկարազբելի ուրախութեան մէջ է: Անոր սիրոյն ու ողորմութեան համար անսահման զարմանք ունի և, չդադրիր գոհանալէ:

Սակայն պէտք է այս բոլոր ուրախութիւններուն մէջ դարձեալ խոնարհ ու արթուն մնալ: Այսինքն, այլ ևս փրկուեցայ, ինծի բան մը չըլլար՝ խորհելով անհոգ չկենալ: Ինչու որ այն ստորին կենդանիները — մեղքերը — թէեւ սրտէն հանուեցան, թէեւ Սատանայ իր ազդեցութիւնը կորսնցուց, սրտէն շատ հեռու չգացին: Սատանայ գիշեր ցորեկ կը հակէ, որպէս զի նորէն իր հատեւորդներով դառնայ հոն, ուրկէ ելաւ, Ան իր տեղը

կորսնցնելուն համար աւելի եռանդով պատեհութիւն կը վնասէ հոն վերադառնալու: Ուստի արթուն կեցէք և աղօթք ըրէք:

### Ա.Պ.ՕԹՎԱ


Ով ձշմարիտ Փրկիչ, ես քու սիրոյդ համար ի՞նչպէս ուրախանամ ու քու փառաւոր ու երջանկարար աւետարանիդ համար ի՞նչպէս գոհանամ որ բաւական ըլլայ: Դուն ինծի քու արիւնովդ քաւութիւն ըրիր և իմ մեղքերուս թողութիւն չնորհեցիր: Դուն ինծի Սուրբ Հոգիին գրաւը տալով կնքեցիր զիս մինչեւ փըրկութեան օրը (Բ.Կոր. Ա. 22): Ոհ, կենդանացուր իմ հաւատքոս: Միշտ աւելի լուսաւորէ մտքիս աչքերը, որպէս զի լաւ սորվիմ գանձերը, նուիրական հոգիները, երկնային բոլոր այն սոլորմութիւնները, զոր չարչարանքիդ և մահուանդ միջոցով ստացար ու աւետարանովդ ինծի մատուցիր:

Ոհ, ի՞նչ շնորհներու արժանացուցիր զիս: Երջանիկ ու անկարօս ըրիր զիս: Առաջ Սատանայի բոյն էի, հիմա Սուրբ Հոգիին բնակարան եմ: Առաջ մեղքի գերի էի, հիմա Աստուծոյ որդիի եմ: Առաջ պիղծ ոգիներու բնակարան էի, հիմա հրեշտակներու օթեւան եմ: Առաջ իմ մէջս մեղք կը յորդէր, Սատանայ կ'իշխէր, հիմա Աստուծմէ պարգևուած Սուրբ Հոգիով ուրախութիւն, խաղաղութիւն և արդարութիւն կ'զգամ: Փրկութեան թշնամիները փախան, զիս մեղքի ու Սատանայի գերութեան մէջ պահող շղթաները խորտակուեցան, և ես ազատ եմ, ողորմութիւն գտայ, շնորհիքի արժանացայ: Ոհ, ես ի՞նչպէս գոհանամ քեղմէ, լիզուս քեղի փառք ու գովութիւն թող մատուցանէ:

Միայն մէկ բան կը խնդրեմ ով սիրելի Փրկիչ:



Զիս մի թողուր և ձեռքդ ինծմէ մի քաշեր, ով փրկիչ Աստուած իմ: Պահէ սիրոս որ անունէդ վախնամ (Սաղ. 8.9. 11): Պահէ զիս որ երբեք չքնանամ, այլ միշտ արթուն մնալով զգոյշ ըլլամ: որպէս զի Սատանայի դարանը և մեղքի թակարդը չի յնամ: Թող քու չնորհքդ հաստատէ իմ սիրոս, որպէս զի միշտ ատեմ մեղքը և անկէ փախչիմ իբր դժոխքէն: Դուն զիս ազատ ըրիր, մի թողուր որ նորէն գերի ըլլամ: Դուն զիս քեզի համար սրբեցիր, պահէ պահպանէ որ նորէն չպղծուիմ: Սիրոս Սուրբ Հոգիին և խաղաղութեան, ուրախութեան ու արդարութեան բնակարան ըլլայ: Ամէն:



Յիսուսի ձեռամբ սասցուած արդարութեան միջոցով  
Աստուծոյ հետ հաշուող եւ խայլուած Ծիսուս զաս  
ուռեւ բան չգիտցող մարդուն ներփին վիճակը:

Շնորհք գտնող մեղաւորին սրտին մէջ խաչուած Յիսուսը և անոր չարչարանքի նշաններէն զատ բան մը չերեւիր: Ինչու որ Սբ. Հոգին կը վարէ այն սիրտը և կը թագաւորէ անոր մէջ: Այն սիրտը Սբ. Հոգիին առաջնորդութեան յանձնուած է, և խաչին վրայ Յիսուսի անձնուրացութիւնը ու չարչարանքը յիշելէ, և անոր փրկագործութեան ո՞րքան սուլի նստիլը մտածելէ զատ ու կը բանով չխանդավախիր: Անոր բուն զրադումն է Յիսուսի մահը միտք բերել և անոր չարչարանքին վրայ մտածել: Պօլոս առաքեալի հետ կ'ըսէ, «Քաւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհ ինծի խաչը ելած է, ես ալ աշխարհի» (Եփես. Զ. 14):

Սբ. Հոգիին առաջնորդութեամբ իր միջնորդին մահուան ու չարչարանքին մէջ այնքան միսիթարութիւն ու զօրութիւն կը գտնէ որ ամբողջովին կը լցուի Անով ու կը գոչէ. «Եթէ Սստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեղի հակառակ: Ան որ իր Որդուոյն չխնայեց, հապա մեր ամէնուն համար մատնեց զայն, ալ ի՞նչպէս անոր հետ ամէն բաներ մեղի չսպարգեւեր» (Հոգի. Բ. 31, 32): Յիսուսի մահն ու չարչարանքը Աստուծոյ հայրական սիրոյն գրաւականն է անոր համար, «Սստուած Քրիստոսով» զայն «իրեն հետ հաշտեցուց և» «յանցանքները» անոր «չսեպեց» (Ա. Կոր. Ե. 19):

Ասոր համար անոր Աստուծոյ հաւատալուն, յաւիտենական այն սիրոյն պաւախնելուն հիմը խաչուած Յիսուս է, ինչու որ Հայր Աստուած, որ յաւիտենական իր սիրոյն համար հաճեցաւ իր միածին Որդին այսպի-

սի չարչարանքի մատնել որպէս զի մենք փրկուինք, ալ ի՞նչ պիտի խնայէ մեղի: Եւ որովհետեւ հաւատացեալը այսպէս կ'արժանանայ խաչուած Յիսուսի փըլքութեան և Յիսուս կը բնակի իբր Աստուծոյ պարգևը անոր սրտին մէջ, այն հաւատացեալը Յիսուսի մէջ ոչ միայն ամէն միսիթարութիւն կը գտնէ, այլ և ամէն զօրութեան ու արդարութեան եղական աղբիւրը: Անոր սա հաւատաքը թէ Յիսուս մարդոց սիրոյն համար մինչեւ խաչի մահը յանձն առաւ՝ աշխարհային ամէն վայել և երկրաւոր ու անցաւոր ամէն փառք ու հարստութիւն ոչինչ համարիլ կու տայ: Անոր այնպէս կը թուի թէ խաչուած Յիսուս միշտ սապէս կ'ըսէ, «Եթէ կ'ուզես իմ ետեւէս գալ և իմ աշակերտո ըլլալ, խաչըդ առ, անձդ ուրացիր և ետեւէս եկուր» (Մատ. Զ. 24), ինչու որ «ան որ իր խաչը չ'առներ ու իմ ետեւէս գար, ինծի արժանի չէ» և ինծի աշակերտ չկըրնար ըլլալ (Մատ. Ժ. 38): Այս պատճառով անոր փափաքը կ'ըլլայ Յիսուսը ներկայացնել: Սրբութեան ու բարեպաշտութեան ետեւէ կ'ըլլայ ինչու որ գիտէ թէ առանց ասոր ոչ մէկը պիտի տեսնէ Տէրը (Եբր. Ժ. 14):

Այսպէս ինքզինք կը մաքրէ աշխարհի և հոգիի ամէն անմաքրութենէ և Աստուծոյ երկիւրով կը ջանայ Սրբութեան մէջ զարգանալ (Յ. Կոր. Է. 1) և միշտ կ'ազգօթէ հոգիով (Եփես. Զ. 18): Բարերարութիւնը և կարուտեալներու հազորդակցութիւնը չմոռնար (Եբր. Ժ. 16), վասն զի գիտէ թէ «Աստուած այնպիսի պատարգներու կը հաւնի:» Կ'ուրախանայ որ Յիսուսի համար կը նախատուի, կը հարստահարուի, կը չարչարուի ու կ'արհամարուի, ինչու որ գիտէ թէ Յիսուսի հետ

չարչարուելով Յիսուսի հետ ալ պիտի փառաւորուինք, վերջապէս մեղ սիրող ու մեզի համար իր անձը մատնող Տէրոջմով ամէն բանի պիտի յաղթենք, և պայքարին մէջ յարատեռողներու խոստացուած վարձքը դիտելով կը վազէ, և «Ան որ կը յաղթէ, ամէն բաները պիտի ժառանգէ» խոստումը (Յայտ. ԻԱ. 7) միշտ ականջին մէջ ունենալով ետեւի բաները կը մոռնայ և դէպ առջեւի բաները, այն է՝ Աստուծոյ երկնային ու բարձր հրաւերին համաձայն Յիսուսով պատրաստուած յաղթութեան դէպ ի նշանակէտը, կը վազէ:

### Ա. Պ. Օ. Թ. Բ.

Ով սիրելի Փրկիչ Յիսուս, որ ինծի համար խաչուցար, դուն զիս Աստուծոյ արդարութեան առջեւ անպարտ ըրիր: Ասկէ ետքը սրտիս մէջ դուն միայն պիտի երեւիս: Սիրոս քեզի միայն, քու չարչարանքիդ ու մահուանդ յիշատակին միայն, յատկացուած է: Իմ ամբողջ կեանքս քուկդ է: Շնորհէ որ այն սէրը որով զիս սիրեցիր՝ ամբողջ հոգիիս, ամբողջ մտքիս ու խելքիս ազդէ, ամէն բանի մէջ ինծի իշխէ, զիս քու պատկերիդ փոխակերպէ, որպէս զի ամբողջովին քեզի նմանիմ և քու չարչարանքդ ու մահդ լիովին անձիս վրայ երեւին:

Շնորհէ որ քու անանցանելի գիտութեանդ համար վնաս ու ոչինչ համարեմ ամէն ինչ որ առաջ շահ կը համարէի: Ամէն բարձր բան դուն եղիր իմ առջեւս: Քեզմէ զատ ամէն ինչ ոչինչ ըլլայ իմ քովս, որպէս զի ես քու արդարութիւնդ ստանամ և ոչ թէ օրէնքէն եղող անձնական արդարութեամբս, այլ քեզի հաւատալով ու Աստուծոյ ընթունելի արդարութեամբ ապաւինելով քու մէջդ մնամ, քեզ ու յարութեանդ զօրու-

թիւնը ու չարչարանքիդ հաղորդութիւնն զգամ և մահդ ներկայացնեմ մինչեւ այն օրը երբ պիտի կրնամ ըսել, «Քրիստոսի հետ խաչը ելայ, և ալ կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս» (Դադ. Բ. 20):


Այսուհետեւ Փրկիչ, շնորհէ որ ես միշտ քեզի նայիմ: Դուն ես որ իմ հաւատքս կատարելութեան կը հասցնես: Դուն քու հաճութեամբդ յանձն առիր խաչի նախատինքը կրել մեր փրկութեան համար: Քու կեանքդ իմ հոգիիս ամենաքաղցր սնունդն է: Քու խաչդ իմ զօրութիւնս է մեղքի դէմ պայքարի մէջ: Քու մահդ իմ ապաստանս է նեղութեան ու մահուան մէջ: Ամէն դժուարութեան ժամանակ աչքերս քեզի կ'ուղղուին: Ամէն տարակոյսի, վախի և խաւարի ժամանակ քու սէրդ իմ արեւս, ասպարս ու լոյս է, իմ առջեւս դրուած ասպարէզի ընթացքը համբերութեամբ վազեւ լու և յաղթելու զօրութիւն է: Ամէն:

## ՊԱՏԿԵՐ Ե

Մաքրագործուած մեղաւորին սրտին մէջ հիմա կ'երեւի Սր. Երրորդութիւնը. Հայրը, Որդին և Սր. Հոգին: Ինչպէս Տէր Յիսուս Քրիստոս ըստ, «Ան որ զիս կը սիրէ, իմ խօսքս պիտի պահէ, ու իմ հայրս զայն պիտի սիրէ, և անոր պիտի գանք ու անոր քով օթեւան ընկնք» (Յովէ. ԺԴ. 23): Յիսուսի արեամբ մաքրուած ու Աստուծոյ առջեւ անպարտ հանուած հաւատացեալին այսպիսի փառք ու պատիւ կը մատուցուի և ան իր անհուն գոհունակութենէն չափազանց կը սիրէ իր Փրկիչը ու կը պահէ անոր պատուէրները: Սյս պատճառով յաւիտենականն Աստուած անոր մէջ կը բնակի, ինչպէս կ'ըսէ Պօղոս, «Զէ՞ք գիտեր որ Աստուծոյ տաճար էք դուք, և Աստուծոյ հոգին ձեր մէջ բնակած է: Եթէ մէկը Աստուծոյ տաճարը կ'ապականէ, Աստուած զայն պիտի ապականէ, զասն զի Աստուծոյ տաճարը սուրբ է, որ դուք էք» (Ա. Կոր. Գ. 16, 17): Դարձեալ, «Դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք, ինչպէս Աստուած ըստ, թէ անոնց մէջ պիտի բնակիմ, ու անոնց մէջ պիտի քայլեմ, և անոնց Աստուած պիտի ըլլամ, ու անոնք ինձի ժողովուրդ պիտի ըլլան» (Բ. Կոր. Զ. 16):

Սրտին մէջ Ս. Երրորդութեան ներքեւ կ'երեւի Քրիստոսի խաչը: Քրիստոս իր խաչով մեզ Աստուծոյ հետ հաշտեցուց: Մեղմէ կը պահանջուի միայն Հաւատք, Յոյս եւ Սէր:

1. Սրտին ձախակողմը 7 առաքինութիւններուն առաջինն է խոնարհութիւն որուն օրինակը Սաղմոսներու գիրքին հեղինակ Դաւիթն է: Դաւիթ պատերազմներու մէջ քաջութիւն ու դիւցազնութիւն ցոյց



Կենդանի Աստուծոյ թնակարան եղող արտով մարդուն  
մերին վիճակը:

տուաւ, և երբ Իսրայէլի թագաւորեց՝ շատ մեծ հարըստութեան ու փառքի տիրացաւ: Սակայն աւելի նշանաւոր եղաւ իր խոնարհութեամբ (որ առաքինութիւններու մայրն է), ինչպէս կը տեսնուի թէ՛ Սաղմոններէն և թէ՛ Թագաւորաց առաջին և երկրորդ գիրքերէն, ուր գործերը նկարագրուած են:

2. Երկրորդ կուգայ առատաձեռնութիւն որուն լաւագոյն օրինակը Սաղմոնի որդին Բոսսն է: Հին Կտակարանի գիրքերէն Հռութի գիրքին մէջ Բոսսի ազգասիրութիւնը ու ազնուութիւնը, մանաւանդ առատաձեռնութիւնն ու անձնուիրութիւնը կը նկարագրուի գովութեամբ: Բոսս Դաւիթի և մեր Փրկչին նախահայրերէն է:

3. Երրորդ կուգայ սէր, որուն օրինակը Յովհաննէս առաքեալն է, ինչու որ աւետարանին մէջ սիրոյ վրայ ամէնէն շատ խօսողը Յովհաննէս է: Ճըշմարիտ հաւատացեալներուն սապէս կը գրէ: «Սիրելիներ, մէկզմէկ սիրենք, վասն զի սէրը Աստուծմէ է, ու ամէն ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է ու կը ճանչնայ զԱստուած: Ան որ չսիրեր՝ զԱստուած չճանչնար: Վասն զի Աստուած սէր է: Այս բանին մէջ Աստուծոյ սէրը մեր վրայ յայտնի եղաւ, որ Աստուած իր միածին Որդին աշխարհ զրկեց, որպէս զի անոր միջոցով ապրինք: Այս բանին մէջ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուած, հապա որ ան մեղ սիրեց, ու իր Որդին զրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու: Սիրելիներ, եթէ Աստուած մեղ այսպէս սիրեց, ուրեմն մենք ալ կը պարտաւորինք մէկզմէկ սիրել: Եթէ մէկզմէկ կը սիրենք, Աստուած մեր մէջ կը բնակի, ու անոր սէրը մեր մէջ

կատարեալ է: Աստուած սէր է: և ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, ու Աստուած՝ անոր մէջ: Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կատարեալ սէրը վախը մէկդի կը ձգէ: վասն զի վախը տանջանքի ենթակայ է: և ան որ կը վախնայ՝ սիրոյ մէջ կատարեալ չէ: Մենք զայն կը սիրենք, վասն զի առաջ ան մեղ սիրեց» (Ա. Յովհ. Դ. 7-19): Յովհաննէս առաքեալ սիրոյ վրայ այսպիսի շատ ճշմարտութիւններ յայտնելէ զատ աշակերտներուն մէջ ամէնէն աւելի սիրելի եղաւ Յիսուսի, ուստի աշակերտներն ու սուրբերը «սիրոյ առաքեալ» կոչեցին զայն:

4. Առաքինութիւններուն չորրորդն է համեստութիւն որուն օրինակն է Յովհէփի պատանին որ իր գեղցկութեամբ եղական ու մաքրութեամբ աննման և համեստութեամբ օրինակելի էր:

5. Սրտին աջակողմը, ամէնէն վերը կայ արթնութիւն: ինչպէս Յովհէփի Գեղցիկ նշանաւոր է իր համեստութեամբ, Դանիէլ մարդարէ ալ նշանաւոր է իր ժուժկալութեամբ ու բարեպաշտութեամբ և իր պարտականութիւնները կատարելու մէջ արթնութեամբ:

6. Արթնութեան ներքեւ կ'երեւի համբերութիւն որուն օրինակն է Յոր: Յորի համբերութիւնը ամբողջ աշխարհի ծանօթ է: Ան իր ինչքին ու ստացուածքին, կնոջ ու զաւակներուն և մանաւանդ իր անձին հասնող ամէն տեսակ ցաւերու ու վնասներու համբերեց կատարեալ պաղարինութեամբ, «Տէրը տուաւ ու Տէրը առաւ, օրինեալ ըլլայ Տէրոջը անունը» ըսելով համբերութեան մարմնացումն եղաւ:

7. Եօթերորդ առաքինութիւնն է ջանասիրութիւն որուն օրինակն է Մարթա: Տէրոջը ծառայող կինե-

րուն մէջ նշանաւոր էր իր ջանքով, ինչպէս գրուած է աւետարանին մէջ: (Դուկ. Ժ. 38—42)

Եթէ պատկերներուն հինգերորդը բաղդատէք առաջինին հետ, կը տեսնէք նախ թէ առաջին պատկերին վրայ սրտին ձիշտ կեդրոնը կը գտնուի Սատանայ և անոր շուրջ եօթը մահացու մեղք ու տգեղ գործեր նշանակող եօթը ստորին ու զզուելի կենդանիները: Այդ վիճակն ունեցող մարդուն սիրտը Սատանայի որջ կամ բոյն է, այսինքն Սատանայ ինչ ստորնութիւն որ ուզէ՝ այն մարդուն ընել կու տայ: Սակայն նոյն մարդը Աստուծոյ չնորհքով աւետարանի փրկութեան աւետիսին մտիկ ընելով կը հաւատայ թէ իր մեղքերուն համար Յիսուս Քրիստոս իր անձը մատնեց և Հոգին Սուրբ անոր սրտին ազդելով անկէ կը վանէ Սատանայի տիրապետութիւնը, խաւարը և խաւարի գործերը — այն գէշ բնաւորութիւնները, և մարդն հաւատքով կ'աղօթէ, և ահա Սատանայի բոյն եղող սիրտը Աստուծոյ տուն կամ տաճար կ'ըլլայ:

Երկրորդ, եօթը մահացու մեղքերուն ու տգեղ գործերուն տեղ եօթը գովկելի ու գեղեցիկ յատկութիւններ կ'անցնին:

Օձի կամ	նախանձի	տեղ	սէր
Սիրամարգի	կամ հպարտութեան	>	ինարհութիւն
իշու	ցանկութեան	>	անբժութիւն
Խոզի	անժուժկալութեան	>	համեստութիւն
Կրիայի	ծուլութեան	>	ջանափրութիւն
Գայլի	բարկութեան	>	համբերութիւն
Մուկի	ազանութեան	>	առատաձեռ.

Ո՞րքան երանելի է այն մարդը, որու սիրտը չար յատկութիւններէ մաքրուած ու գեղեցիկ յատկութիւններով զարդարուած է և որու ուրախութիւնը միշտ Տէրոջմով է:


## Ա.Վ.ՕԹ.Ք.

Ով ամենասուրբ, յաւիտենական Աստուծուած, աղբւոր սիրոյ և Հայր մեր ու Տէր Յիսուս Քրիստոսի, ինչպէս այնքան սիրեցիր մարդիկը որ Յիսուս Քրիստոս միածին Որդիկովէ կենդանացուցիր և ուրախացուցիր զանոնք: Իմ մէջս կ'ուզես բնակիլ, իմ մէջս կը մնաս և ես քու մէջդ: Դուն ինծի ո՛չչափ մօտ ես և ես քեզի ո՛րչափ մօտ եմ: Ես Աստուծոյ ամէն լրութիւնով պիտի լցուի՞մ (Եփիս. Գ. 19), ուրեմն չսիրե՞մ քեզ բոլոր սրտովս ու բոլոր զօրութեամբս: Ոհ, այդ սէրը չնորհէ ինծի: Շնորհէ որ, ինչպէս դուն ամբողջովին սէր ես, ես ալ ամբողջովին սէր ըլլամ: Շնորհէ որ քու մօտութիւնդ աւելի խորապէս զգամ և քեզի հետ աւելի սերութէն միանամ, Ոչ մէկ բան թող բաժնէ զիս քու սէրէդ: Պահէ սիրտս որ քեզի յաւիտենական բնակարան ըլլայ: Քեզի քաշէ իմ հոգիս որ միայն քեզ սիրեմ, միայն քեզի պատկանիմ և քեզմէ ուրիշը ոչինչ համարիմ: Ամէն բանի մէջ քեզ միայն տեսնեմ և քեզ միայն գտնեմ: Բոլոր գործերս քեզի համար ըլլան և ինչ որ քաշեմ քեզի համար ըլլայ, այնպէս որ դուն ըլլաս իմ միակ բանս և ամէն բանս, դուն իմ սրտիս Աստուծուածը և իմ յաւիտենական բաժինս: Ամէն:

## ՊԱՏԿԵՐ Զ

Այս պատկերին մէջ կը տեսնէք թէ Յիսուսի չարչարանքին նշանները պակսած, չորհքի ճառագայթները մարած, ասաղ ու հաւատքը հետզհետէ աղօտացած են սրտին մէջ և կ'սկսին լրենց պայծառութիւնը կորսնցնել: Նշանակութիւնը սա է թէ մարդը գեղեցիկ գործերու մէջ թուլցած, անտարբերութեան անձնատուր եղած, աղօթելէ և արթուն մնալէ դադրած, աշխարհային ունայնութիւններու հետեւած և հետզհետէ անձնական հաճոյք, հպարտութիւն ու սին հեշտութիւններ հետապնդած է և բնականաբար քիչ անդամ նայած է խաչուած Փրկչին ու խորհած անոր չարչարանքին վրայ, որով ան ալ կամաց կամաց ելած է անոր սրտէն: Մարդուն հոգեւոր ջերմութիւնը մարած և Յիսուսի հանդէպ սէրը պաղած է: Շնորհքը ետ քաշուած, հաւատքը կորսուած է: Սրտին մէջ խաւար պատած է ու ցուրտ կը տիրէ: Մարդը բարոյական ծուլութեան և անկարութեան ենթարկուած է: Հետեւանքն ի՞նչ կ'ըլլայ:

Սա կ'ըլլայ որ դաշոյնով մարդ մը, որ աշխարհը կը ներկայացնէ, դաշոյնը բոնի անոր սիրտը կը միսէ, ինչու որ բնաւ գորութիւն, համարձակութիւն, լոյս ու սէր մնացած չէ հոն: Աշխարհի սպառնալիքէն կը վախնայ ան և աշխարհի գովեստներէն հրապուրուելով կը խարուի ու դարձեալ անոր կը նուիրէ իր սէրը: Այն ժամանակ Սատանայ կը վերադառնայ և այն կենդանիները նորէն կը բերէ ու անոր սրտին մէջ կ'արձակէ: Մարդն ալ պաղ և աղօթքի մէջ ծոյլ ըլլավով մեղքէ չզգուշանար ու անձը վտանգի կ'ենթարկէ: Որովհետեւ հոգեւոր կեանքի պահապան չունի և



Հոգեւոր պայմարին մէջ դարձեալ պաղած եւ աշխարհի հրապուրուած մարդուն ներփին վիճակը:

անկարող է թշնամիին դիմադրել, Սատանայ դիւրաւ կը գրաւէ անոր սիրաը:

Հրեշտակը կամ Տէրոջը շնորհքը կ'աշխատի հեռացնել Սատանան, բայց որովհետև մարդը դուռը մեղքին բացած է, և ինք արթուն մնալով չազօթեր ու անկեղծորէն չաշխատիր շնորհքի հետ մէկտեղ, մեղքը և մեղքի միջոցով ալ Սատանայ անոր սիրաը կը մըտնեն:

Փորձութեան մէջ չիյնալու համար ո՛րքան նշանակալից է Յիսուսի խօսքը, «Ազօթք ըրէք, ամէն ատեն ազօթք ըրէք»: Երբ կը թողուի ազօթքը, ամէն բարիք ալ կը կորառի: Ազօթքը հոգեւոր շնչառութիւն է: Երբ շնչառութիւնը տկար ըլլայ, ամէն ինչ կ'անհետի, անօգուտ կ'ըլլայ: Երբ մենք արթուն ըլլանք կամ քննանանք, Սատանայ կու գայ և որոմ կը ցանէ ցորենին մէջ:

Սիրտ մը որ արթուն, զինուած ու սպառազինուած չէ, ամէն թշնամիի, աշխարհի և Սատանայի առջև բաց է: Ուստի հոգիդ թող թափուր չըլլայ Սրպահապաններէն, թող ազօթէ և խաչուած Յիսուսի նայի անդադար: Երբեք անհոգ մի ըլլար, որպէս զի անմաքուր բան մը չմտնէ Աստուծոյ տունը և չապականէ զայն: Հակառակ պարագային Աստուած ալ քեզ կ'ապականէ: «Արթուն կեցէք, հոկեցէք, վասն զի ձեր հակառակորդը, Սատանայ, մոնչող առիւծի պէս կը պտղտի, ու կը փնտոէ թէ ո՛վ կլէ» (Ա. Պետ. Ե. 8): Ով որ կը կարծէ թէ հաստատուն կեցած է, հոգ թող տանի որ չիյնայ: Ինչպէս Պօղոս առաքեալ կը պատուիրէ, պէտք է «Աստուծոյ սպառազինութիւնը» հագնիլ (Եփես. Զ. 12-19), «Վասն զի մեր պատերազմը

արիւնի ու մարմինի հետ չէ, հապա իշխանութիւններու ու պետութիւններու, և աշխարհի իշխաններուն հետ, երկնաւորներուն մէջ եղող չար ողիներուն հետ, որ մեզ բուռն նետով կը հետապնդեն: Զարին կրակոտ նետերը հաւատքի վահանով միայն կրնանք մարել: Ասոր համար հաւատքը միշտ ամուր ու կենդանի և սէրը միշտ տաք ու վառ ըլլալու է: Այս ալ կ'ըլլայ՝ Յիսուսը և անոր չարչարանքը աչքէ և սրտէ բնաւ հեռու չպահելով, մեր նայուածքը աշխարհային հարապոյններու առջեւ փակելով, Աստուծոյ մօտ ըլլալուն համար միշտ անոր հետ յարաբերութիւն պահելով, Սուրբ Հոգիին առաջնորդութիւնը շարունակ խնամով վնասելով ու անոր յանձնուելով: Երբ Յիսուս, որ հաւատքի հիմն է, սրտէն բաժնուի, հաւատքի ամբողջոյնքը, լոյսը և կեանքը կը ջնջուի և սէրը կը պաղի:

### Ա.Վ.ՕԹՎ

Ով սիրտերը քննող Աստուած, դուն զիս կը քննես ու կը ձանչնաս, իմ տկարութիւնս ու սրտիս անհաւատարմութիւնը գիտես: Գիտես թէ սէրս պազ է և հաւատքս տկար: Գիտես թէ ո՛րչափ հակամէտ եմ մեղքի և աշխարհի, թէ սիրտս պահպաննելու և անձս ու բանալու համար ո՛րչափ կը քաշուիմ ու կը վախնամ աշխատելէ կատարեալ լոջութեամբ ու բոլոր ուժով աւ զօրութեամբ: Ինձի զօրութիւնս պարզեւէ, զիս կինդանացուր և ուղիղ ձամբու մէջ պահէ: Առանց քեզի բան մը չեմ կրնար ընել: Ով Փրկիչ Աստուած, զիս մէթողուր: Զեռքդ իմ վրայէս մի վերցներ, եթէ իմ մէջս չկենաս և զիս չպահպանես, չեմ կրնար ես քու մէջդ

Ֆնալ: Մի թողուր որ իմ մէջս եղած լոյսը մարի, սէրը  
պաղի, վստահութիւնը խախտի և հաւատքը մեռնի: Ին-  
ձի միշտ նոր զօրութիւն տուր, աղօթելու նոր եռանդ  
ու փափաք: Միշտ քեզի դառնալու համար ուրախու-  
թիւն տուր ինձի: Միշտ քեզի նայելու և չարչարան-  
քէդ օգտուելու համար զօրութիւն ու կարողութիւն  
տուր աչքերուս: Դարձուր աչքերս Սատանայի նայելէ:  
Ամէն:



Այն մարդուն սրին վիճակը որ դարձի զաղէն վերց  
կրկին ինկած և իր հին մեղեռուն մեջ եւ հինս  
բողոքովին Սատանայի իշխանութեան տակ է:

ՊԱՏԿՆԵՐ Է.

Այս պատկերը կը ցուցնէ մեղաւորի մը ներքին վիճակը, զոր Յիսոս Ղուկա ԺԱ. 24-26 ի մէջ սապէս կը նկարագրէ. «Երբ պիղծ ողին մարդէ մը կ'ելլէ, անջուր տեղեր կը պտըտի, հանգստութիւն կը փնտռէ. ու երբ չգտներ, կ'ըսէ, Դառնամ նորէն իմ տունս ուրիէ ելայ: Եւ կու գայ մաքրուած ու յարդարուած կը դժնէ զայն: Այն ատեն կ'երթայ, կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին, և այն մարդուն վերջը առաջինէն դէշ կ'ըլլայ:»

Ի՞նչ սոսկալի տեսարան: Այն սրտին մէջ, որ քիչ առաջ Աստուծոյ տուն և Սր. Հոգիին բնակարան էր, Սատանայ իր աթոռը դրած է ու դարձեալ կը թագաւորէ: Հին մեղքերը և անոնց աղտեղութիւնը դարձեալ կ'երեւին հոն, զղուելի կենդանիները դարձեալ տեղաւորուած են հոն իբր իրենց բոյնին մէջ: Ի՞նչո՞ւ այսպէս կ'ըլլայ: Պատասխանը սա է. մարդը չդիտեր արթէքը չնորհքին զոր գտաւ, կը մոռնայ թէ մաքրը ուեցաւ իր հին մեղքերէն, բարեպաշտութեան ու սըր բութեան մէջ չյարաւեւեր և ով որ յառաջ չերթարեալ կ'երթայ անչուշտ, անկարելի է անփոփոխ մնալ: Ով որ դռնէն ներս մտնելու համար լրջօրէն չաշխատի, լրջօրէն չքալէ նեղ ճամբէն, ով որ մեղքը չատէ բոլոր սրտով և աշխարհի ցանկութիւններէն զղուելով չզգուշանայ մեղանչելու նպաստաւոր ամէն պատեհութենէ, Սատանայէ հրապուրուելով մեղքի և աշխարհային ցանկութիւններու թակարդը կ'իյնայ: Այն ժամանակ Պետրոս առաքեալի յիշած առակը կը ճշմարտուի անոնց համար թէ «Ծունը նորէն իր փախածին կը դառնայ, ու լուացուած խոզը՝ ցեխի մէջ տապլտկելու»:

(Բ Պետ. Բ. 22): Այսինքն անհոգ ու ախմար մարդք նորէն իր հին մեղքերուն մէջ կ'իյնայ և իր կիրքերուն անձնատուր կ'ըլլայ: Սր. Հոգին կը փախչի այնպիսիէն, ինչու որ ի՞նչպէս կրնայ պիղծ հոգիի հետ բնակակից ըլլալ: Ի՞նչպէս կրնայ սիրտը նոյն ժամանակ թէ՛ Աստուծոյ տուն և թէ՛ Սատանայի բոյն ըլլալ:

Հրեշտակը կամ չնորհքը յուսահատութեամբ կը քաշուի կ'երթայ: Սակայն թեւերը վերցնելով կը յայտարարէ թէ Տէրը կը խղճայ այն մեղաւորին և կը յորդորէ զայն Յիսուսի սա աղաղակով: «Երանի թէ քու խաղաղութիւնդ գիտնայիր, գիտնայիր թէ Աստուծոյ հայրական գիրկը տակաւին բաց է քեզի համար, ինձի դարձիր և ես քեզի պիտի ողորմիմ:» Սակայն չուզեր ան: Աչքը անամօթաբար աշխարհի ուղղած է, և ոչ յայտնի ու ոչ ծածուկ կերպով կ'ամչնայ մեղքէ ու խայտառակութենէ: Զտեսներ թշուառութիւնը որուենթարկուած է, հաւատքը կրոսուած և խղճին սոտղը խաւարած է ամբողջովին և սրտին գարզութիւնը չտեսներ, ինչու որ Սատանայ բոլորովին զայն կուրացուցած է:

Ահա, ով սիրելի հետեւող, եթէ մեղքերդ խոստավանելով ու զղալով ներում ընդունելէ ետև մեղքէ չզգուշանաս Աստուծոյ չնորհքով, ընդհակառակն նորէն մեղքի անձնատուր ըլլաս, քու վիճակդ ասոր պէս առաջինէն աւելի գէշ կ'ըլլայ, ինչու որ Սատանայ, քու մէջդ աւելի կը հաստատուի և մեղքը կ'առատանայ և գուն այլեւս բոլորովին մեղքի ծառայ ու գերի կ'ըլլաս: Ուստի նորէն զգուշացիր այն հին մեղքերէն ու սովորութիւններէն: Քանի որ չնորհք ընդունելով պատեցար մեղքէ ու Սատանայէ և պատերազմ հոչա-

կեցիր հպարտութեան, ագահութեան, ցանկութեան ու նախանձու, անժուժկալութեան ու բարկութեան և ծուլութեան դէմ, անոնց սիսերիմ թշնամին եղիր յաւիտեան և մի թողուր որ նորէն քու ծոցդ մտնեն: Ամէն տեղ ու ամէն կերպով զգուշացիր անոնցմէն և հալածէ զանոնք, ինչու որ կ'ուղեն միշտ քեզի վերադառնալ և իրենց նախկին բնակարանին տիրանալ: Եթէ դուն անոնց տեղ տաս, քու վերջդ առաջինէն աւելի գէշ կ'ըլլայ: Ապաւինէ այն Սստուծոյն որ քեզի կ'օգնէ և կրնայ քեզի յաղթութիւն տալ թշնամիիդ վրայ և, եթէ իյնաս իսկ, ել ու կոռէ, միայն մի ընդունիր մեղքի հետ հաշտ ըլլալ, այլ միշտ Փրկչիդ գորաւոր աջին փակիր, ինչու որ ան կարող է և կ'ուղէ քեզի օգնել: Անոր երկայն բազուկը այն սպառազէն թշնամին, Սատանան, վանելով կրնայ որսը, այսինքն քեզ, անոր ձեռքէն խլել ու ազատել: Արդինչպէս կը հաւանիս որ սիրտ Սատանայի բոյն ըլլայ, քանի որ կրնայ Սստուծոյ տուն ու բնակարան ըլլալ:

### Ա.Վ.ՕԹ.Ք

Ով Սստուծ, Սստուծ իմ և Հայր իմ, դուն զիս ստեղծեցիր: Ես քու արարածդ եմ: Ով Յիսուս Փրկիչ իմ, ես քուկդ եմ, դուն Սստուծոյ կողմէ իմաստութիւն խաղաղութիւն, սրբութիւն և փրկութիւն եղար ինձի համար: Դուն իմ թէ՛ բարեխօսս ես թէ՛ մեղքի ու Սատանայի գերութեանս մէջ իսկ զիս մեղքէ, մահէ և Սատանայէ ազատելու համար ամէն զօրսութեան ու կարողութեան տէր Փրկիչս: Դուն ապատամբներու համար պարգևներ առիր: Ուստի քանի

որ ես քեզի դէմ ապստամբեցայ, ինձի համար պարգև ունիս: Դուն ամէն մեղաւոր կ'ընդունիս, քեզի եկողներէն ոչ մէկը կը մերժես: Ահա ես կու գամ և չնորհք ու ողորմութիւն կը խնդրեմ: Դուն ամէն մարդ փրկել կ'ուզես և կարող ես փրկել: Կորստեան անդունդը ինկողներէն մէկը չկայ որ չազատես կամ չուզես ազատել: Ազատէ զիս մեղքի և Սատանայի գերութենէն: Այլեւս մեղք ու Սատանայ իմ մէջս չբնակին: Սիրտ քուկդ է, դուն զայն քու արիւնովդ ծախու առիր: Բուկդ է, բնաւ ուրիշի մը չես թողուր: Ուստի լոյսդ զրկէ որպէս զի խաւարը փարատի, հոգիդ պարգևէ որպէս զի Սատանայ փախչի: Շնորհքդ տուր ինձի, որպէս զի մեղքին ոյժը չնջուի: Սատանան սուքերուս տակ կոխոտէ և անհետացուր անոր իշխանութիւնը: Շնորհէ որ ես ազատ ըլլամ: Ամէն:

## ՊԱՏԿԵՐ Ը.

Ահա անապաշխար մեղաւորը մահուան անկողնին մէջ պառկած է։ Մարմինը ցաւերով լցուն է և հոգին մահուան երկիւղէն, տրուելիք վճռէն կը սոսկայ։ Ամբողջովին լքուած է՝ չհաւատալուն և Տէրն ու Փըրկիչը չճանչնալուն համար ամէն օգնութենէ և միաթարութենէ զուրկ է։ Մահը անոր աչքին առջև կեցած կ'սպառնայ յափշտակել անոր ամէն բանը — ուրախութիւն, ստացուածք, պատիւ, և ամէն հաճոյք ու զուարձութիւն։ Սատանայ անոր կը ցուցնէ անոր բոլոր մեղքերը։ Ինչպէս առաջ մեղքը սիրելի ու գեղեցիկ կը ցուցնէր անոր, հիմա ալ նոյն մեղքերով կը տանջէ անոր խիզճը և մեղքի վարձքը յաւիտենական կորուստ ու յաւիտենական դատապարութիւն և գըժոխքի պատիժը ցոյց կու տայ։ Ո՞ր կողմ ալ նայի յուսահատորէն, սոսկալի ու սարսափելի տեսարաններէ զատ բան մը չտեսներ։ Մինչև հիմա քնացող իր խիզճը հազարապատիկ ուժով արթնցած կը տանջէ զինք դժոխքի սոսկումներով։ Դժոխքը և անդունդը բաց և զինք ի սպառ կլլելու պատրաստ կը տեսնէ, այլեւ բարի ոչ մէկ բան կը լսէ։ Ինչու որ անոր սիրու շատոնց ի վեր մեղքի պատճառով անզգայ է ամէն բարի աղղեցութեան և խուլ է Սատուծոյ ձայնին։ Ան դարձուցած է իր երեսը Սր. Հոգիէն, շնորհքէ և հրեշտակէն։ Ասոր համար Սր. Հոգին ալ քաշուելով թողած է զայն իր կամաւոր յուսահատութեան մէջ։ Այսպէս հոգին փէլով կը գտնէ ինքզինք թիսուսի աթոռին առջև ու կը լսէ այն Դատաւորին բերանէն, որու խօսքն ու շնորհքը արհամարհեց և արիւնն իր ոտքերուն տակ առաւ ամբողջ իր կեանքին մէջ,



Ամաստուածին մահը եւ մեղին վարձը։

սա կտրուկ ու անփոփոխ վճիռը, «Մէկդի գնա ինձմէ, ով անիծեալ, այն յաւիտենական կրակը»:

Այս է մեղքի և աշխարհին ցանկութիւններու վարձքը, Աստուծմէ մերժուիլ ու դատապարտուիլ, երկինքն դրկուիլ ու Աստուծոյ առջեւէն վտարուիլ անդունքը, տանջանքի սոսկալի այն վայրը, ուր կրակը չմարիր և որդը չմեռնիր:

Ոհ, ո՞րչափ մարդիկ յաւիտենական այդ կորուստին կը դիմեն արագութեամբ: Ո՞րչափ մարդիկ կ'ուղեն հաւատացեալ ու Քրիստոնեայ կրուիլ, բայց անձնական կիրքերու, անմաքուր փափաքներու, վատ հակումներու կը ծառայեն և ազանութեան, շռայրութեան, հպարտութեան ու ամբարտաւանութեան, նախանձու և գինովութեան ու ամէն տեսակ ստորնութեան անձնատուր կ'ըլլան: Ասոնք կարելի է երբեմն իրենց մեղքերը կը խոստովանին ու կ'ապաշխարեն, բայց իրենց ապաշխարանքը անձի բարեկարգման համար չէ, այլ լոկ սովորութեան համար, ուստի դարձեալ կը մեղանչեն ու իրենց չար սովորութիւններուն մէջ կը մնան: Դարձեալ կ'ապաշխարեն ու կը մեղանչեն և մինչեւ վերջը այսպէս կը շարունակեն առանց փոխուելու, առանց բոլոր սրտով զղջալու, բոլոր հոգւով Յիսուսի յանձնուելու և անկեղծօրէն անոր չնորհքն ու ողորմութիւնը խնդրելու: Կը շարունակեն իրենց մեղքերը խոստովանիլ ու ապաշխարել, մարդոց քարոզել, խրատի ունկնդրել և ուրիշ կրօնական պաշտամունքի ու արարողութիւններու մասնակցիլ: Սակայն այս ամէնը կրնան արտաքին բաներ ըլլալ և իրենք իսկապէս մեղքի ծառայ, աշխարհասէր և Սատանայի գերի ըլլալ: Այսպիսիներ կրօնական համայնքներու

և պաշտամունքներու մասնակցելով իբր թէ սրտի փոփոխման, բարքի ազնուացման ու հոգիի նորոգման, պէտք չունին, հետզհետէ աւելի կը միրճին մեղքի մէջ և յանկարծ մահը վերջ կու տայ իրենց կեանքին և մարմնաւոր բաներ ցանած ըլլալով կորուստ կը հնձեն, ինչու որ «Ինչ որ մարդ կը սերմանէ՝ նոյնը պիտի հնձէ»:

Արդարեւ շատ սոսկալի է մահն անսոնց որ չնորհքընդունեցան բայց չպահեցին. Յիսուսը ճանչցան, բայց անոր մէջ չմնացին, այլ ուրանալով աշխարհի և մեղքի անձնատուր եղան: Անոնց համար սապէս կ'ըսուի երր. Զ. 4-6 համարներուն մէջ. «Անհնար է մէկ անգամ լուսաւորուածներուն, որոնք երկնաւոր պարգեւին համը առին, ու Հոգւոյն Սրբոյ հաղորդ եղան, և Աստուծոյ բարի խօսքին ու գալու աշխարհին զօրութիւններուն համը առին, եթէ իյնան՝ նորէն ապաշխարութիւնով նորոգուիլ. որովհետեւ կրկին Աստուծոյ Որդին խաչը կը հանեն իրենց անձին, ու կը խայտառակին:» Ոհ, ով մեղաւորներ, դուք որ անձնական հակումներու անձնատուր եղած էք, երանիթէ գիտնայիք թէ ինչ է ձեր սիրածը: Ինչու որ ձեր սիրածը մահ ու կորուստ է: Ժամանակ պիտի գայ որ ձեզի սիրելի թուածը ձեզ պիտի պատժէ: Ձեր ծուռ ճամբան նկատի առնելով չարը ատեցէք: Անձնական կիրքն ու մեղքը թողուցէք: Ասոնք ձեր կորուստնեն: Ձեր բարի Հոգուին, Յիսուսի, սիրալիք կոչը լսեցէք. «Ինձի եկէք, և իմ արիւնս կը մաքրէ ձեզ ձեր մեղքերէն, ևս ձեզի թողութիւն կու տամ, ձեզ երջանիկ կ'ընեմ: Ես իմ ոչխարհներուս յաւիտենական կեանք կու տամ:» Այս ձեր բարեգութ Հոգուին ձայ-

Նին դէմ ձեր սիրտերը մի խստացնէք, որպէս զի օր  
մը չլուէք դատաւորին որոտուն սա ձայնը. «Մէկդի  
գացէք ինձմէ, անիծեալներ, յաւիտենական կրակը:»  
Սոսկալի է կենդանի Աստուծոյ ձեռքն իյնալ:

### Ա. Զ. ՕԹՎՔ

Ով Աստուծած, դուն արդար ես, քու բոլոր դա-  
տաստաններդ արդար են: Քու քովդ աշառութիւն  
չկայ: Ամէնուն իրենց գործերուն համեմատ կը հա-  
տուցանես: Ան որ չապաշխարեր, չհաւատար քու խօս-  
քիդ ու զայն չպահեր, արդէն իսկ դատապարտուած  
է, կեանք պիտի չտեսնէ, յաւիտեան մահուան մէջ  
պիտի մնայ: Դուն բարեպաշտներու և հաւատացեալ-  
ներու բարի և ողորմած ես, իսկ անդարձ, անապաշ-  
խար մեղաւորներու սոսկալի ես: Ով Տէր ու Փրկիչ,  
դուն զիս մեղքէ, մահէ և դժոխքէ ազատեցիր: Ինծի  
զօրութիւն տուր որ սիրտս ժամանակին պարպեմ մեղ-  
քէ և ամբողջովին քեզի դառնամ: Զիս արթնցուր որ  
մեղքէ ազատուելով ապրիմ, սիրտս կոտրէ որ կա-  
տարեալ անկեղծութեամբ ազաշխարեմ, Հոգիիդ ա-  
ռաջնորդութեան հպատակիմ և նոր մարդ ըլլալով քե-  
զի համար միայն ապրիմ ու մեռնիմ: Ամէն:

### ՊԱՏԿԵՐ Թ.


Այս պատկերին մէջ կը տեսնէք թէ Քրիստոնէին  
սիրտը ամէն կողմէ պաշարուած է թշնամիով: Սա-  
տանայ և մեղք միշտ կը հսկեն ու կ'աշխատին իրենց  
առաջին իշխանութիւնը վերահաստատել սրտին մէջ:  
Աշխարհը ներկայացնելու համար վարի կողմը երկու  
մարդ կայ: Մէկը գաւաթ մը մատուցաներով անձնա-  
կան կիրքերու և աշխարհային զեղսութիւններու կը  
հրաւիրէ Քրիստոնեան: Միւսը դաշոյնով կ'ապառնայ  
և հարստահարսութեան, նախատանքի և այլ բռնի մի-  
ջոցներով կ'արգիլէ զայն ուղղութիւն ընել և կը յոր-  
դորէ անտարբեր կեանք մը վարել:

Այս կեանքին մէջ Քրիստոնեան միշտ պատերազ-  
մելու է մարմնաւոր ցանկութիւններու, աշխարհի և  
Սատանայի դէմ, որոնք փրկութեան թշնամիներն են: Երբ  
սիրտը անոնց դէմ զինուած ու սպառապինուած  
ըլլայ, անոնք չեն կրնար յաղթել: Պատկերին վերի  
կողմը նկարուած հրեշտակը միշտ յիշեցնելով «Եթէ  
կողմը նկարուած հրեշտակը միշտ յիշեցնելով» (Բ  
մէկը մրցի, չպսակուիր՝ եթէ ըստ օրինի չմրցի» (Բ  
տիմ. Բ. 5) և «Ով որ մինչև վերջը համբերէ, ան  
պիտի ապրի» (Մատ. Ժ. 22) խօսքերը, կը խրախուսէ  
զայն պայքարիլ ու յարատենել:

Սրտին մէջ աստղին պայծառ ու գեղեցիկ լոյսը  
անոր հաւատքին կենդանութեան նշան է: Ա. Յովհ.  
Ե. 4ի մէջ գրուած է, «Այս է յաղթութիւնը որ շա-  
խարհի կը յաղթէ, այսինք հաւատքը:» Մարդը բոլո-  
րովին Աստուծոյ կը վստահի, ուստի սրտին մէկ կող-  
մը գրուած է «Աստուծոյ պէս ո՞վ կայ: Աստուած ին-  
ծի հետ է: Անով կարող եմ ամէն բանի յաղթել: Աս-  
տուծոյ չնորհքը հերիք է ինծի:» Սրտին միւս կողմն

ալ գրուած է. «Ով պիտի զատէ մեղ Քրիստոսի սէցէն. տառապահնքը, կամ նեղութիւնը, կամ հալածանքը, կամ սո՞վը, կամ մերկութիւնը, կամ վտանգը, կամ սո՞ւրը։ Հապա այս ամէն բաներուն մէջ ա'ւ աւելի յաղթող կ'ըլլանք անով որ մեղ սիրեց» (Հոռվ. Բ. 35, 37)։ Հաւատքն ու սէրն ալ սրտին վերև մնալով կը զօրացնեն մարտք բարութեան մէջ։

Սրտին մէջտեղը խարիսխ մը կայ և անոր կապուած է խաչ մը, որու շուրջ գրուած է «Յիսուս իմ սէրս է»: Խարիսխը «Յոյս» կը նշանակէ, խաչն ալ կը ցուցնէ թէ Յիսուս Քրիստոս Աստուածային նախախնամութեամբ իր անձը խաչին վրայ պատարագ մատուց, որպէս զի մեր մեղաց քաւութիւն ըլլայ, և մենք մեղքէ ազատուելով յաւիտենական կեանք ընդունինք: Կը ցուցնէ նաև Տէրունական ընթրիքը որ այս փրկութիւնն ու կեանքը կը յայտնէ: Ինչու որ մեր յաւիտենական կեանքը մեր սա հաւատքէն է թէ Յիսուս մեզի համար իր անձը մատնեց, և Քրիստոնեան Աստուծոյ ծրագրով կատարուած այս գործը, այսինքն մեր փրկութեան համար Յիսուսի պատարագութիւր, փրկութեան միակ միջոց կը համարի և անոր հաւատալը յաւիտենական կեանքի պայման: Ինչպէս մարմնի կեանքը նիւթական սնունդով կ'ըլլայ, և հոգիին կեանքը հոգեւոր սնունդով, նոյնպէս աշխարհի կեանք տուող երկնային ճշմարիտ կերակուրն ալ Յիսուս է: Ուստի Քրիստոնեան միշտ այն ճշմարիտ կերակուրին անօթի է և այն կեանքի ջուրին ծարաւի, այսինքն ամէն օր կ'ուղէ աւելի կարօտով փնտուել Տէր Յիսուսը, զգալ անոր սէրը, սորվիլ թէ ի՞նչպէս մեզի համար նախատուեցաւ, սերտել ու կատարել անոր պատուէր:



Ասիկա ներքին վիճակն է այն Քրիստոնեային որ  
մեջի դեմ պայմանին մեջ եւ բարեպաշտ զոր-  
ծերու մեջ մթնելու վերջը հաստատուել կը մնայ:

Ները և ծամարտութեան աւելի խորապէս վերահասու ըլլալ։ Օրէ օր կը ջանայ հաւատքով աւելի խոր յարաբերութիւն ունենալ ու միանալ իր Փրկչին հետ ինչպէս կ'ըսէ Յիսուս, «Աստուծմէ տրուած հացը այն է որ երկինքէն կ'իջնէ, ու աշխարհի կեանք կու տայ։ Ես եմ կենաց հացը. ան որ ինծի կու գայ, երբեք պիտի չանօթենայ, և ան որ ինծի կը հաւատայ, պիտի չծարաւի» (Յովհ. Զ. 33, 35). Դարձեալ, «Ով որ իմ մարմինս ուտէ և իմ արիւնս խմէ, յաւիտենական կեանք կ'ունենայ, ու ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը» (Յովհ. Զ. 55)։

Յետոյ պատկերին մէջ կը տեսնէք խաչուած Յիւ  
սուսը և բաց գիրք մը, աւետարանը, ինչու որ ճշմա-  
րիտ Քրիստոնէին ամէնէն ոիրելի զբաղումը և սրտին  
ամէնչն ախորժելի կիրակուրն է խոկալ Սատուծոյ  
խօսքին, Աբ. գիրքին, վրայ որ կը պատմէ թէ Յիսուս  
չարչարուեցաւ ու մեզի համար իր անձը մատնեց:  
Ինչու որ հոգին անով կը կենդանանայ, անով զօրու-  
թիւն կ'ստանայ մեղքի, Սատանայի և փորձութիւն-  
ներու գէմ դնելու և կ'սպառազինուի: Ան որու սրտին  
մէջ Յիսուս հաստատուած չէ, թէեւ կ'ապրի, մեռած  
է: Ան որ Սատուծոյ խօսքը, Աբ. գիրքը, ամէն գիր-  
քէ աւելի չսիրեր, չկարդար ու չուսումնասիրեր, ամէն  
գիտութենէ գերիվեր չհամարեր ու իր կեանքին ու  
գործին առաջնորդ և ուղեցոյց չըներ, այսպիսին եթէ  
բարոյապէս մեռած ու մերժուած ալ չէ, հոգեւորապէս  
վտանգաւոր հիւանդ է:

Վերջապէս երկրպագութեան տեղ մը , եկեղեցի մը ,  
դրամի բաց քսակ մը և հաց ու ձուկ կը տեսնենք : Եկե-  
ղեցին կը ցուցնէ թէ մարդը կը սիրէ աղօթել , միշտ

կ'աղօթէ, թէ՛ հրապարակաւ ուրիշ հաւատացեալներու հետ, թէ առանձին իր սենեակին մէջ ի ծածուկ և թէ ամէն ուր որ կ'երթայ կամ կը նստի: Աստուծոյ հետ կը հաղորդակցի, անոր հետ կ'ապրի, անոր հետ կը քալէ, անոր ներկայութեան համար կ'ուրախանայ, անոր անձնատուր կ'ըլլայ և անոր մէջ կը կենայ: Առանց աղօթքի ոչ մէկը արդար ու բարեպաշտ կ'ըլլայ, սիրոյ և հաւատքի մէջ կը մնայ:

Դրամի բաց քսակը անոր բարեգործութեան ու  
բարեսիրութեան նշան է։ Կը ցուցնէ թէ ան կը կոռի  
ագահութեան դէմ, իր կարողութեան չափով ամէն  
յօժարութեամբ իր ստացուածքէն կու տայ կարօտեալ-  
ներուն և իր սիրտը հետզհետէ կը զատէ երկրաւոր  
բաներու հետ կապուելէն։ Գիտէ թէ զեղխութիւն,  
չոայլութիւն և անժուժկալութիւն և այսպիսի վատ  
մեղքեր լքող անձեր յետոյ գաղտնապէս ագահութեան,  
դրամապաշտութեան անձնատուր կ'ըլլան, այլեւայլ  
պտտրուակներով կը մոռնան ուրիշներու բարիք ու  
օգնութիւն ընել, և Սատանայի որոգայթը կ'իյնան  
աւելի դէշ կերպով։

Հայն ու ձուկը անոր ժուժկալութիւնն ու սակաւապետութիւնը կը ցուցնեն : Այսինքն անձնական կիրքերը զօրացնող, հոգին տկարացնող և Աստուածապաշտութիւն ու բարեպաշտութիւն թուլցնող կերպումէ ու զեղվութենէ զգուշացող մարդիկ կը ցուցնեն : Հաստատամիտ Քրիստոնեան այսպիսի զէնքերով կը զինուի և երբեք այդ զէնքերը չթողլով ամէն թշնամիի—աշխարհի, Սատանայի և անձի—կը յաղթէ ու կը պահպանէ իր գիրքը :

## ԱՂՅԹԻՔ

Ով սիրելի Փրկիչ, երբ դուն իմա ես, ուրիշ բան  
մը պէտք չըլլար ինծի երկինքի մէջ և երկրի վրայ:  
իմ մէջս կեցիր, և տուր որ ես քու մէջդ կենամ: Այն  
ատեն պտղատու որթի ձիւղ մը կ'ըլլամ: Առանց քեզի  
բան մը չեմ կրնար ընել: իմ հաւատքս միշտ աւել-  
ցուր, որպէս զի քեզ ու ամենակարող զօրութիւնդ  
հասկնամ ու քեզմով ամէն բանի յաղթեմ: Քու  
սէրդ աւելնայ իմ մէջս, դուն իմ ամբողջ սիրոս քու  
սիրովդ վառէ, որպէս զի ես, ով փառաւորեալ Տէր,  
ամէն բանէ աւելի քեզ, միայն քեզ սիրեմ և ուրիշ  
սիրուն ու գեղեցիկ ոչ մէկ բան սիրոյս արժանի գտնեմ:  
Այնպիսի չնորհք ու հաստատամութիւն տուր ինծի,  
որ միայն քեզմէ կու գան: Ոչ մէկ բան թող զատէ զիս  
քու սէրէդ: Քու խաչդ, մահդ ու մահուանդ յիշատակը  
թող իմ սիրոյս ու անձնուիրութեանս սնունդն ըլլան:  
Զիս քեզի նետ միացուր անրաժանելի կերպով: Հիմա  
պարգևէ ինծի այն կեանքը զոր խոստացար դուն և  
սրտիս մէջ բնակէ հաւատքով (Եփես. Գ. 14—21):  
Զօրութեամբ ու կեանքով լեցուն խօսքդ թող զիս ամէն  
որ արթուն պահէ պայքարի, համբերութեան ու հա-  
ւատարմութեան մէջ, և լուսաւորէ, զօրացնէ և զգու-  
շացնէ զիս: Ամբողջ սիրոս, ամէն հակամութիւններս,  
փափաքներս ու խորհուրդներս քեզի նուիրուին: Տուր  
որ ոչ թէ քանի մը դէշ հակումներու և փափաքներու  
դէմ միայն մաքառիմ, այլ՝ ազահութեան, ցանկու-  
թեան, նախանձու, ուրիշներու վեասին վրայ ինդա-  
լու, հպարտութեան, բարկութեան, վրէժխնդրութեան,  
ծուլութեան ու զեղխութեան նման մահացու ամէն  
չարութեան դէմ: Տուր որ անդադար աղօթելով մա-  
քառիմ ու յաղթեմ և քեզի հաւատարիմ մնալով միշտ  
քեզմէ նոր զօրութիւն ստանամ: Ամէն,

## ՊԱՏԿԱՆԻ Ժ.

Հաւատարի և բարեպաշտութեան մէջ մինչև վերջը  
յարատեւող մարդն անա իր օրհասի ժամուն ուրախ  
ու սփոփուած կը պառկի իր մահուան անկողնին մէջ:  
Մահէ ու պատիժէ չվախնար, ինչու որ ատոնք ունէ  
վերաբերութիւն չունին անոր հետ, ինչպէս Յիսուս  
ինք կ'ըսէ, «Ան որ իմ խօսքս մափկ կ'ընէ, և կը  
հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք  
ունի, ու դատապարտութեան տակ չիյնար, հապա  
մահուանէ դէպի կեանք անցած է» (Յովհ. Ե. 24):

Անա արդարը Աստուծոյ չնորհքը և մեղքերու թո-  
ղութիւն ստանալուն համար կը պառկի հանգիստ  
սրտով: Խաչուած Յիսուս անոր անկողնին գլուխն է:  
Անոր ամբողջ սէրն ու վաստանութիւնը խաչուած Յի-  
սուսի վրայ է, զոր ամբողջ կեանքին մէջ սրտին մէջ  
կը կրէր և որ հիմա մահուան ժամուն անոր միակ  
յօյն ու ապաւէնն է: Ներքին խաղաղութիւն, Աստ-  
ուածային միխթարութիւն և սրտին մէջ բնակող Հո-  
գիին սուրբ օծումը կը փայլին անոր ժամուն դէմքէն  
Անոր աչքերն ու սիրով դէպի երկինք ուղղուած են:  
Անոր նայուածքը կարծես կ'ըսէ, «Ես կ'ուզեմ մար-  
մինի հոգին ազատիլ և Յիսուսի քով ըլլալ:» Աստուծոյ  
հրեշտակը անոր վերջին չունչին կ'սպասէ Աստուծոյ  
քով տանելու համար անոր հոգին: Վերջապէս ա-  
նոր հոգին մարմնի կապէն և մահուան կապանքէն ա-  
զատելով կը թաշին Փրկչին քով զոր կը սիրէր և որու  
կը յուսար ու կը հաւատար հոս առանց տեսնելու: Յի-  
սուս իր թեւերը բանալով կ'ըսէ, «Ով բարի ու հաւա-  
տարիմ ծառայ, որ քիչ բանի մէջ հաւատարիմ եղար,

քեզ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ։ մտիր քու Տէրոջդ ուրախութեան մէջ (Մատ. ԻԵ. 21):

Սատանայ խայտառակ ըլլալով կը փախչի։ Ո՞վ կընայ նկարագրել թէ ի՞նչ մեծ ուրախութիւն է Տէրը երես առ երես տեսնել, փառքով ու երջանկութեամբ անոր նմանիլ։ Ահա այսպէս կը մեռնի աշխարհի և Սատանայի դէմ հաստատամտութեամբ կռուող արդար ու հաւատացեալ Քրիստոնեան։ Բարեպաշտներու չարչարանքը և պայքարը այսպիսի գեղեցիկ վախճան կ'ունենայ։

Երանի թէ այս գեղեցիկ վախճանը ամէն մարդ խրախուսէ միշտ հաւատալ, միշտ պայքարիլ, հաստատ կենալ, նեղ դռնէն մտնել և խաղաղութեամբ չուկէտն հանելու համար ամէն ջանք ի գործ դնել ամենայն յարատեւութեամբ, ինչու որ անդին փառապսակ ու անանց և անթերի ժառանգութիւն մը կ'սպասէ։

### Ա. Ղ. ՕԹ. Ք.

Ով Տէր Յիսուս, սրախ ի՞նչ ուրախութիւն է որ դուն մահուան ժամուն սրտիս մէջ ու անկողնիս քով պիտի ըլլաս ու զիս միխթարես։ Սյն ատեն ո՞վ զիս անհանգիստ պիտի ընէ, կամ դատապարտէ։ Իմ մեղքե՞րս, դուն ինձի ներեցիր անոնց համար, զիս անպարտ հոչակեցիր, թանկագին արիւնովդ լուացիր, մաքրեցիր ու սրբեցիր։ Սատանա՞ն։ Ոչ, դուն անոր յաղթեցիր, անոր զօրութիւնը ջնջեցիր։ Յորչափ ես քու պաշտպանութեանդ տակ ըլլամ, ինձի դէմ բան մը չկրնար ընել։ Դուն ինձի համար քու անձդ մատնեցիր, մեռելներէն յարութիւն առնելով։ Աստուծոյ աջ կողմը նստար, և ինձի համար հոն կը բարեխօսես (Հոռվ. Է. 34)։ Ուրեմն, ով Յիսուս, չնորհէ որ ես



Բարեկայց եւ արդար մարդուն մահը։

միայն քեզի համար ապրիմ, քեզի համար մեռնիմ։  
Ճնորհէ որ քեզմէ զատ ամէն բանի հետ իմ յարաբե-  
րութիւնս կարեմ, սիրտս ալ իր յարաբերութիւնը  
կտրէ ամէն բանի հետ որ պատրաստ չէ ինծի հետ  
մեռնիլ քեզի համար։ Քու երկնաւոր ու յաւիտենա-  
կան թագաւորութեանդ համար սէր ու եռանդ ար-  
թնցուր իմ մէջս որ իմ ընթացքս երկնից մէջ արձա-  
նագրուի իբր արժանի այն Աստուծոյն որու կը ծա-  
ռայեմ և անոր ժողովրդին։

Այն օրհնեալ յոյսը թէ վերջը քու քովդ պիտի  
ըլլամ թող միշտ ոգեւորէ զիս առանց յոգնելու բա-  
րիք գործել հոս, որպէս զի օր մը հոն անդադար հըն-  
ձեմ։ Նաև չնորհէ որ քու վրադ իմ վստահութիւնս,  
սուրբ պատարագիդ, ողորմութեանդ և սիրոյդ վրայ  
իմ հաւատքս չխախտի բնաւ, և միշտ ապաւինիմ քու  
չարչարանքիդ, մահուանդ աննման ու յաւիտենական  
զոհիդ, որ ինծի համար քու անձդ տուիր և հիմա  
կենդանի ես յաւիտեան։ Ամէն։

---



ՀՀ Ազգային գրադարան



NL0160617

Հետեւեալ նոր զիբերը կը յսնձնարառուին  
բնիքցողներու.

	Դաշ
Հակառակ Որդիներ . . . . .	3
Էտկարի Բարի Լուրը . . . . .	2
Աղջիկներու Յատուկ Պատմոթիւններ . . . . .	4
Մնունի Երգը . . . . .	2
Ամինօրեայ Լոյս — Առաւօս . . . . .	5
Ամինօրեայ Լոյս — Երեկոյ . . . . .	5